ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹ

<<ՀՀ Արագածոտնի մարզի Բերքառատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ երաժշտության (3 դասաժամ), կերպարվեստի (9 դասաժամ) և տեխնոլոգիայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

ՈՒսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1.Դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,

2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3.Անձը հաստատող փաստաթուղթ,

4.<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

5.Ինքնակենսագրություն (Ձև 5)

6.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

9.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

10.Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մարտի 6-ից մինչև մարտի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:-00-ը,բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մարտի 26-ին՝ ժամը 13:00-ին, Բերքառատի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ,Ծաղկահովիտ համայնք, Բերքառատ բնակավայր,5-րդ փողոց,շենք՝ 1:

Տեղեկությունների համար զանգահարել 093-454-383 հեռախոսահամարով: